թիւն ընդ նոսա՝ թէ Ա. ըստակ տվող չեմք ձեզ. եւ գնացեալ ևս բազում անգամ տային արզուհալ անդ յՈւսկիւտարն թէ Ըստակ տվող չեմք։ Եւ նայ վարէր զսոսա և հալածէր, զզուէր և գարշէր յազգաց մերոց, թէպէտեւ այլ իրաց՝ որք երթային առաջի նորա։ Գնացեալ անկան առ Մահմուտ աղայ՝ աներորդոյ վէզիրին, խոստանալ նմա Գ. քսակ ըստակ կնքով ամենեցուն, միայն թէ հրաման առցէ ի վէզիրէն զի ըստակ ոչ տացեն նոցա։ Եւ վէզիրն յանձնեաց ի գարշուութենէ նոցին առ տէֆտէրտարն զբանս։ Եւ ի պօստանճոյ օլօֆէն (պաքաղ) և եղեալ խասէքի ի վերայ Սուրբ Սարգսցոց, որ առին Ը. քսակ ըստակ, որ գործակալ անուամբ էին ի վերայ եկեղեցոյն, մինչև անպակաս զամենայն վճարէին յանմեղ և ի խեղճ ժողովրդենէն։ Եւ ո՞րն պատմի Սուրբ Սարգսի չարեացն զիա՛րդն և զո՛րպէսն՝ թէ զի՛նչ արարին ժողովրդոցն անարգանօք ի հաւատս, յօրէնս և յեկեղեցիս, ի կին և յորդիս, յալիս և ի մօրուս. ի գիշերի շրջելով ի դրունս ժողովրդեանն արբեալք և զեխեալք իբր ըՀկեալ (?) եկեղեցին ընդ պօստանճօք. զոմանս ծեծէին և զայլս ի կալանս պահէին, զոմանս յերկաթս տէֆտէրտարին տանէին, մեծաւ ամբարտաւանութեամբ և հպարտութեամբ ժողովէին զդրամս յանմեղաց քրիստոնէից, զառաջին և վերջին վնաս ոչ իւրեանց հասուցեալ՝ այլ տառապեալ աղգիս. իւրեանք գործեալ զչարիսն և այլոց վճարեալ։ Եւ յայս պատճառ ամենայն եկեղեցիք որ ի քաղաքս, զատ ի տուելոց քրիստոնէից զտուգանս՝ Ե Ե բեռ ըստակ պարտական մնայր։ Եւ այսպէս ԺԵ տարի յաւել ի մէջ չարութեան կացեալ, յորժամ եղեն երեսփոխանք՝ ի նոյն ամի այրեալ եկեղեցին, աւերեալ և քայքայեալ, զգեստն ծախեալ և զպղնձեղէնս։ Այնք որ պատմեցան՝ առաւելագոյն ունէին չարութիւնս, փառամոլութիւնս և ամբարտա-